ԼԻԼԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՎՈԿԱԼԻԶՆԵՐՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ЛИЛИ МАРКОСЯН
ВОКАЛИЗЫ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ

LILI MARKOSYAN
VOCALISES IN THE STUDYING

ISBN 978-9939-802-32-9

9 789939 802329

ԵՊԿ հրատարակչություն
YSC Publishing house Издательство ЕГК

ԼԻԼԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ЛИЛИ МАРКОСЯН
LILI MARKOSYAN

ՎՈԿԱԼԻԶՆԵՐՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ВОКАЛИЗЫ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ
VOCALISES IN THE STUDYING

ԵՐԵՎԱՆ
ԵՊԿ հրատարակչություն
2023

ЕРЕВАН
Издательство ЕГК
2023

YEREVAN
Publishing House YSC
2023

ՀՏԴ 784.94(07)
ԳՄԴ 85.943գ7
Մ 371

Հաստատված է՝
ԵՊԿ գիտական խորհրդի կողմից

Երաշխավորված է՝
Ակադեմիական երգեցողության ամբիոնի կողմից

Գրախոսներ՝ *ԵՊԿ պրոֆեսոր, ՀՀ ժողովրդական արտիստ ՕԼԳԱ ԳԱԲԱՅԱՆ*
ԵՊԿ պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր արտիստ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԻՄՈՆՅԱՆ
ԵՊԿ դոցենտ՝ ՀՀ վաստակավոր արտիստ ՀԱՍՄԻԿ ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ

Մարկոսյան Լիլի Հենրիկի
Մ 371 Վոկալիզներն ուսուցման գործընթացում / Լիլի Հենրիկի Մարկոսյան.- Եր.: ԵՊԿ հրատարակչություն, 2023.- 28 էջ:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը ներառել է Ֆրանց Աբթի, Գաետանո Զեյդլերի, Ջուզեպպե Կոնկոնեի վոկալիզները, որոնք ընդգրկված են «Ակադեմիական երգեցողության» մասնագիտացման դասընթացի երկացանկում:

Ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է երաժշտական ԲՈՒՀ-երի և քոլեջների դասախոսների և ուսանողների համար:

Маркосян Лили Генриховна
Вокализы в процессе обучения / Лили Генриковна Маркосян. - Ер.: Издательство ЕГК, 2023. - 28 с.

Данное учебно-методическое пособие составлено на основе вокализов Франца Абта, Гаэтано Зейдлера и Джузеппе Конконе, включенных в педагогический репертуар вокалистов.

Сборник рекомендуется педагогам по вокалу и учащимся музыкальных ВУЗов и колледжей.

Markosyan Lili Henrik
Vocalises in the Teaching Process / Lili Henrik Markosyan. - Yer.: YSC Publishing House, 2023. - 28 p.

This methodological manual comprises Franz Abt's, Gaetano Zeidler's, Giuseppe Concone's vocalises as part of the repertoire of the specialization course "Academic Singing".

The manual is intended for professors and students of musical universities and colleges.

ՀՏԴ 784.94(07)
ԳՄԴ 85.943գ7

ISBN 978-9939-802-32-9
ISMN 979-0-801602-46-6

© Մարկոսյան Լ., Маркосян Л., Markosyan L., 2023
© ԵՊԿ հրատարակչություն, Издательство ЕГК, YSC Publishing House, 2023

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ձայնի մշակման սկզբնական շրջանում կարևոր և անհրաժեշտ է վոկալ տեխնիկական հմտությունների ձեռքբերումը հետագայում ավելի բարդ ստեղծագործությունները հաղթահարելու համար:

Մանկավարժական պրակտիկայում մեծ տարածում ստացած վոկալիզի ժանրը կարևոր նշանակություն ունի երիտասարդ երգչի դաստիարակման գործում:

Քանի որ հիմնականում կոնսերվատորիա ընդունվում են 17-18 տարեկան ուսանողներ, խորհուրդ է տրվում շատ վոկալիզներ երգել, ձայնը միջին ռեգիստրում ամրացնելու և դիապազոնն ընդլայնելու, հավասարեցնելու, ավելի ճկուն և կանտիլենային երգեցողության համար: Այս վոկալիզների օրինակները ուսանողներին օգնելու են կատարողական տեխնիկական ունակություններ ձեռք բերելու, ձայնի դրվածքը, հնարավորին չափով հավասար հնչողությունը, հետագայում հեշտ յուրացնելու համար՝ արիաներ, ռոմանսներ և այլ ժանրերի ստեղծագործություններ:

Դաշնամուրային նվագակցությունը նույնպես կարևոր նշանակություն ունի սկսնակ երգիչ-կատարողի կրթության գործում և զարգացնում է անսամբլային կատարման ժամանակ միմյանց լսելու ունակությունը:

Учитывая, что в консерваторию в основном поступают в 17-18 лет, учащимся рекомендуется петь много вокализов для постановки голоса, укрепления голоса в среднем регистре, расширения диапазона, ровного звучания во всех регистрах, а также развития кантиленного пения. Данные упражнения помогут достичь ровного звучания и имеют цель в дальнейшем облегчить освоение романсов, арий, а также произведений других жанров.

В воспитании начинающего певца не менее важное значение имеет наличие фортепианного аккомпанемента, который развивает навык ансамблевого музицирования, умение слушать партнера.

Considering the fact that the students are enrolled in conservatory programs mainly at the age of 17-18, students are encouraged to perform various vocalises in order to strengthen their voices in the middle register, expand the range, achieve well-balanced sounding in all registers, as well as develop cantillational singing. These exercises will help to achieve a well-balanced sounding and will aim to further facilitate the mastery of romances, arias, as well as works of other genres.

Incorporating piano accompaniment in the education of beginner singers is also crucial in developing ensemble skills and fostering the ability to hear the musical partner.

Ըստ ուսումնական ծրագրի, առաջին տարիներից սկսած վոկալիզների միջոցով սովորել (երգեցողություն առանց բառերի) կամ նախընտրած հնչյունով կատարել երաժշտության պահանջները՝ ձայնի միջոցով արտահայտելով երաժշտության միտքն ու ոճը: Վոկալիզների միջոցով զարգանում է երգչի կանտիլենային կատարողականությունը, որի շնորհիվ լսելի, հասկանալի է դառնում ձայնի տեմբրը, ըստ որի էլ ընտրվում է հետագա ծրագիրը:

Այս և նմանատիպ վոկալիզների հիման վրա ուսանողները սովորում են երգել, որպեսզի բարձրաձայն (ֆորտիսիմո) երգեցողություն չլինի, երգեցողությունը չնմանվի բղավոցի, ճչոցի: Պետք է հետևել, որպեսզի ձայնավորների և բաղաձայնների արտաբերման ժամանակ հնչերանգային հավասարությունը, միանման և հստակ լինի: Այն նպաստելու է նուրբ ձայնով սահուն երաժշտական ամբողջական կազմակերպված միտք արտահայտելուն: Վոկալիզների վարժությունների կատարումները օգնում են զարգացնել ձայնի շարժունակությանը, շնչառության ամրապնդմանը, դիապազոնի ընդլայնմանը:

Սովորել շնչառությունը հավասար բաշխել համապատասխան ֆրազների, պաուզաների (դադարների) նաև ինտերվալների սահուն արտաբերմանը:

Վոկալիզները, ուսանողները (կամ աշակերտները) սկզբնական շրջանում կարող են կատարել միաձայն կամ նոտաների անվանումներով:

Առաջարկվող վոկալիզների օրինակ են՝ Ֆրանց Աբթի N 1, N 2, N 3 վոկալիզները (1.), որոնք գրված են բոլոր ձայների համար: Այս վոկալիզները նպաստում են բոլոր ձայների միջին դիապազոնի ամրապնդմանը: Նոտաների անվանումներով երգել սահուն լեգատո, որպեսզի մեղեդին հասկանալի արտահայտիչ ինտոնացիոն շատ հստակ ու մաքուր լինի:

Օրինակ N 1 վոկալիզը գրված է սոպրանոյի և տենորի համար (4.): Պետք է երգել Moderato (չափավոր) տեմպում, մաքուր հնչողությամբ կարևորելով ձայնավորների հավասար արտաբերումը և բաղաձայնների հստակ արտասանությունը: Այս վոկալիզն օգտակար է ձայնի միջին դիապազոնի ներքևի և կենտրոնական հնչյունների ամրապնդման համար:

Ֆրանց Աբթ



Օրինակ N 2-րդ վոկալիզը ձայնի դիապազոնի միջին ռեգիստրի ամրապնդման համար է: Գրված է (Andante) դանդաղ տեմպում: Խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել մեծ տևողություն ունեցող հնչյունների ինտոնացիոն բարձրությանը: Այն զարգացնում է շնչառությունը:

Ֆրանց Սրթ



Օրինակ N 3-րդ վոկալիզը երգել (Andante) դանդաղ տեմպում, մեղեդին երգել սահուն, լեգատո, հետևել շնչառությանը, 5-րդ տակտի նոտայի շեշտը կարևորելով, մեղեդին երգել լեգատո: Հաջորդիվ կրկնել նույնությամբ: Վոկալիզը օգտակար է ցածր և միջին ռեգիստրի հնչյունները կատարել՝ միևնույն տեմբրում, ամուր շնչի հիմքով:

Ֆրանց Սրթ





Օրինակ N 5 վոկալիզը գրված է սոպրանոյի համար: Այն պետք է կատարել (Andante) անդաղ տեմպով: Վոկալիզն սկսվում է II օկտավայի *ռե* նոտայից, կատարել հետևելով շնչառությանը, ամուր պահելով ստոծանին, պահպանելով հնչյունների բարձրությունը: Ձայնավորները երգել՝ սահեցնելով կարծես մեկը մյուսի մեջ և պահպանել հնչյունի բացարձակ բարձրությունը:

Ֆրանց Աբթ





Վոկալիզ N 8-ը գրված է սոպրանոյի համար, թեթև շարժումով մեղեդին պարզ է: Սկսվում է II օկտավայի *ռե* նոտայից, արնհրաժեշտ է երգել մաքուր, գլխային ձայնով, շնչառությամբ՝ ամուր պահելով նաև ստոծանու մկանները: II տակտի *սի* ♭- *ֆա* ինտերվալը երգել՝ պահելով բարձրությունը: II օկտավայի *մի* նոտայից մինչև IV տակտի վերջը, պահել *դո* հնչյունի բարձրությունը: IX տակտից սկսած *ֆա-դո-սի-լյա-սի* լեգատոն ազատ և լայնաշունչ երգել *(ֆա-դո)*: Երգելիս տակտերի սկզբում շնչառության բաշխումը կազմակերպել այնպես, որ, երաժշտական ֆրազները սահուն ավարտվեն և հետևել ինտոնացիային:

Ֆրանց Աբթ



Հաջորդ օրինակը Գաետանո Զեյդլերի ժողովածուի I մասից N 1 վոկալիզն է (2.):

Օրինակը շատ մեղեդային է: Այն օգնում է մեղեդու միջոցով ձայնի վստահ տիրապետմամբ լեգատո երգելուն: Շունչը փափուկ պահելով մեղեդին սահուն կատարել: Ձայնավորով երգել՝ նոտաների տևողությունները և հստակ կատարել ռիթմիկ պատկերը՝ ընդգծելով ռիթմիկ փոփոխությունները (13-րդ տակտից սկսած), քորեյ և յամբ ֆրազները: Առաջարկում ենք 20-րդ տակտից սկսած երաժշտական միտքը շեշտադրումներով կատարել: Վերընթաց և վարընթաց մեղեդին երգել գլխային և կրծքային հնչեղությամբ, հավասարությունը պահելով:

Գաետանո Զեյդլեր



N 2 վոկալիզը գրված է բարձր վերին տիսիտուրայում, սկսվում է I օկտավայի *ֆա*-ից: Այն պետք է կատարել ազատ, հետևել հնչյունների բարձրությանը, անհրաժեշտ է միատարր ձայնարտաբերում: Սույն վոկալիզը կամրապնդի նաև ռիթմի զգացողությունը:

Օրինակ՝ երգել *ռա* վանկով՝ կլոր արտաբերմամբ՝ ազատ: Միջին մասից՝ 17-րդ տակտից սկսած, հնչեցնել ձայնավորն ըստ հնչյունի բարձրության, հստակ ռիթմով և բաղաձայնի պարզ արտաբերմամբ:

Գաետանո Ջեյդլեր



Նույն հեղինակի շարքից են՝ N 3, N 4, N 5 վոկալիզները, որոնք գրված են բարձր սոպրանոյի համար: N 3-ի առաջին հատվածը բավականին պարզ է՝ երկու քառորդ չափով: Առաջարկվում է երգել թեթև, արագ և զգացմունքային: Վոկալիզի մեղեդիում լեգատոն երգել սահուն, լայն փափուկ շնչով, ինտոնացիոն մաքրությանը հետևել այն տակտերում, որտեղ ստակատոներ կան, կտրուկ ռիթմիկ երգել: 17-րդ տակտից հետևել երաժշտության դինամիկ զարգացմանը՝ 18-րդ տակտի *սի♮ դո♯ ռե ֆա* հնչյունները կարևորելով: Երկրորդ անգամ կրկնելով թեման՝ 25-րդ տակտից երգել վերընթաց, հասցնել ֆորտեի *ֆա* նոտան (28-րդ տակտ):

Գաետանո Ձեյդլեր



N 4 վոկալիզը գրված է սոպրանոյի համար, ***Largo*** (շատ դանդաղ, լայն) տեմպով:

Օրինակն առաջարկում ենք մեղեդային կատարել *ա* հնչյունով, ազատ, առանց լարումների, լիարժեք ձայնով, ինտոնացիայի և ռիթմի հետ միաժամանակ փորձելով արտահայտել երաժշտության բնույթն ու տրամադրությունը: Օգտակար է կանտիլենայի զարգացման համար:

Գաետանո Ջեյդլեր

4.



N 5 վոկալիզը գրված է սոպրանոյի համար, դանդաղ տեմպում:

Օրնակը խորհուրդ ենք տալիս կատարել *ա* հնչյունով, միացնելով որևէ բաղաձայն *(ռա, մա ...)*: Պետք է ուշադրություն դարձնել լեգատոյով սահուն ***p*** և ***f*** հնչեղությանը, ինտերվալների ինտոնացիոն մաքրությանը: Ռիթմիկ փոփոխություններին օգնում է ակորդների նվագակցությունը: Վոկալիզի մեղեդու վերընթաց և վարընթաց ինտերվալները պետք է կատարել հանգիստ, շնչառության ամուր հենակետով, հնչյունի բարձրությունը պահպանելով: Կարևոր է ուշադրություն դարձնել թեմաների տոնայնությունների փոփոխություններին:

Գաետանո Զեյդլեր

5.



Օրինակ՝ N 10-ը բարձր սոպրանոյի համար է գրված, վոկալիզն անհրաժեշտ է կատարել Allegretto տեմպում, պահվող հնչյունից սահուն անցնելով դեպի հաջորդ հնչյունը: Շատ կարևոր է պահպանել հնչյունի բարձրությունը: 9-րդ տակտի *դո* նոտան կրկնելիս երգել լեգատո, պիանոյից զարգացնել կրեշչենդոյով, ամուր պահելով ստոծանու մկանները:

Գաետանո Զեյդլեր



II-III կուրսերի ուսանողների համար ընտրել ենք վոկալիզների ժողովածուի 2-րդ մասից 11-րդ համարը, որը գրված է բարձր ձայների համար: Մեր նպատակն է երգել հնչյունի բացարձակ բարձրությունը պահելով գլխային հնչողությունը պահպանելով ինտոնացիոն մաքրությունը: Անհրաժեշտ է ամուր պահել միաժամանակ կրծքային և գլխային ձայնի միանման հավասար հնչողությունը: Մեղեդու թռիչքաձև զարգացման ժամանակ վերընթաց և վարընթաց ինտոնացիաներում պահպանել հնչյունի սահուն լայնաշունչ արտաբերումը: Խորհուրդ է տրվում Վոկալիզը հանձնարարել որոշ չափով վոկալ պատրաստվածություն ունեցող՝ ուսանողներին:

Գաետանո Զեյդլեր




rall.
rall.
pp
a tempo
f
smorz

Հաջորդ օրինակները՝ Ջուզեպպե Կոնկոնեի վոկալիզներից են (3.): Դրանք նպաստում են ոչ միայն ձայնի ճկունության և շարժունակության ձեռքբերմանը, այլև զարգացնում են տեմպի, ռիթմի զգացողությունը: Ուսանողը ձեռք է բերում ձայնի ճկունություն և ինտոնացիոն մաքրություն, կանտիլենային կատարողականության հմտություն:

Վոկալիզների հետևյալ օրինակները՝ N 3, N 5, N 9, N 10, N 11 խորհուրդ է տրվում կատարել երգային, գեղեցիկ, հնչյուններն արտաբերելով՝ առանց լարման, ըստ ձայնի աստիճանների հավասարապես հնչեցնելով ձայնավոր և բաղաձայն հնչյունները:

Ջուզեպպե Կոնկոնե





N 5 վոկալիզը սոպրանոյի համար է գրված: Այն պետք է երգել լեգատո, վերընթաց և վարընթաց ինտերվալներ երգելիս հետևելով շնչառության ուղղությանը: Պետք է ինտերվալները հնչյունից հնչյուն սահուն երգել փափուկ, խնայողաբար օգտագործելով շունչը օր. *սի*[1]-*ռե*[2]-*լյա*[1]: Շատ կարևոր է հետևել դաշնամուրի նվագակցությանը, հարմոնիային և մեղեդու ծորուն միտքը հասցնել ավարտին, պահպանելով ձայնի միատարրությունը:

Ջուզեպպե Կոնկոնե




pp
pp
p
p
rall.

Խորհուրդ է տրվում N 10 վոկալիզը երգել *ռա* հնչյունով, սահուն, թեթև: Հարկավոր է ուշադրություն դարձնել դինամիկ նշաններին, կատարել մաքուր հնչերանգով: Մեկ լիգայով միացված հնչյունները երգել կապակցված՝ ձայնավորով, երկարաձիգ, արտահայտիչ:

Բարձր սոպրանոյի համար

Ջուզեպպե Կոնկոնե



Առաջարկում ենք N 11 վոկալիզը (5.) երգել նոտաների անվանումներով (*սի, լյա, սոլ, սոլ, սոլ, ռե...*) ուշադրություն դարձնել մի քանի հնչյունները կատարել մեկ վանկով, արտահայտիչ լեգատո: Պետք է ռիթմիկ փոփոխություններին, օրինակ 9-րդ, 10-րդ տակտերում *սի* հնչյունն արտաբերելիս տևողությունը պահպանել՝ հստակ, արագ, կարճ, 2-րդ *սի* հնչյունը՝ երկարաձիգ: Մեղեդու պահվող նոտաները նպաստում են շնչառության զարգացմանը:

Սոպրանոյի համար

Ջուզեպպե Կոնկոնե




pp
cresc.
ff
p
cresc.
mf
p
p
mf
p
p

Հաջորդ օրինակը Գ. Զեյդլերի ժողովածուի II մասից է (6.): N 16-րդ վոկալիզը մեղեդային է: Պետք է տեսիտուրային բարձրությունը պահպանել՝ շատ հստակ գլխայինի և միջին ռեգիստրի հավասար հնչողությամբ: Ինտերվալները վարընթաց և վերընթաց գլխային ձայնով երգելիս, անհրաժեշտ է բարձրությունը պահել այնպես, որ ինտերվալի հիմքի ինտոնացիոն բարձրությունը չփոխվի:

Սոպրանոյի համար

Գաետանո Զեյդլեր



N 14-րդ վոկալիզը սոպրանոյի բարձր տեսիտուրայի համար է: Պետք է պահպանել ռիթմիկ պատկերները՝ հետևել ռիթմիկ ակտիվությանը, մեղեդային գծին: Յուրաքանչյուր ֆրազի մուտքում, հստակ երգել հնչյունի բարձրությունը, հետևել ինտոնացիոն մաքրությանը: Միջին մասում ռիթմիկ ստակատոները երգել կտրուկ, վերընթաց ինտերվալները՝ լեգատո:

Գաետանո Զեյդլեր



Օրինակ N 15-ը նախատեսված է սոպրանոյի համար: Վոկալիզը գրված է ստակատոյով: Այն երգելիս կօգնի զգալ ստոծանու աշխատանքը: Պետք է երգել ճկուն, թեթև՝ ամուր հենվելով որովայնի՝ ստոծանու հենման կետին, երկար շնչառության ուղղությունը պահելով, ըստ հնչյունի բարձրության: Պետք է աշխատել ***Allegretto*** տեմպում, հասնել գեղեցիկ մեղեդային երգեցողության:

Գաետանո Ջեյդլեր



Բոլոր վոկալիզներն էլ կարելի է ընտրել ձայնին հարմար տոնայնություններում՝ դասախոսի հայեցողությամբ:

Այս և նմանատիպ վոկալիզները, դաշնամուրի նվագակցությամբ օգնում են երաժշտության ան-սամբլային կատարմանը:

Այսպիսով, ուսուցման ընթացքում վոկալիզներով ձայնի մշակումը սկզբնական փուլում օգնում է ձեռք բերելու երգչական տեխնիկական ճկունություն, ձայնարտաբերման հավասար տեմբրային հընչողություն, ձայնածավալի ընդլայնում, հետագայում ստեղծագործությունները հեշտ թեթև տիրապետելու համար:

Երբեմն վոկալիզի ձևով են գրվում համերգային կատարման համար նախատեսված վիրտուոզ պիեսներ, որոնք կարող են կատարել արդեն կայացած երգիչները:

Այդպիսի օրինակներից են՝ Սերգեյ Ռախմանինովի «Վոկալիզը», Ռեյնգոլդ Գլիերի «Կոնցերտը ձայնի և նվագախմբի համար», Առնո Բաբաջանյանի «Վոկալիզը» ձայնի և նվագախմբի համար, Ռոբերտ Պետրոսյանի «Վոկալիզը» ձայնի և դաշնամուրի համար և այլն:

Ուսումնամեթոդական ձեռնարկը կազմելիս հիմնվել ենք մասնագիտական, մեթոդական, համա-պատասխան գրականության վրա. Ֆրանց Աբթ, Երգեցողության ձեռնարկ ցածր ձայների համար (ռուսերեն լեզվով, ձեռնարկը առկա է բոլոր ձայների համար), Գաետանո Զեյդլեր՝ «Վոկալիզներ. երգելու արվեստը, 40 մեղեդի բարձր ձայնի համար» (ռուսերեն լեզվով), Զուզեպպե Կոնկոնե «Վոկալիզների ընտրանի բարձր ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ» (ռուսերեն լեզվով):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Абт Франц,* Школа пения для низких голосов., Избранные упражнения М.: Музыка, 1965 г.
2. *Зейдлер Г.,* Вокализ. Искусство пения 40 мелодий для высокого голоса, М.: Музгиз 1964 г.
3. Конконе Дж., Избранные вокализы для высокого голоса в сопровождении фортепиано, М.: Музыка, 1984 г.
4. Вокальный Архив Александра Кондакова Абт Франц часть 3, notarhiv.ru vokal.html Դիտման ամսաթիվը՝ 30. 08. 2021 թ. ժամը՝ 14. 40:
5. Конконе Дж., /www.notarhiv.ruvokal.html Դիտման ամսաթիվը՝ 30. 08. 2021 թ. ժամը՝ 18. 35:
6. Зейдлер Г., часть 1, Из нотного архива России. notarhiv.ru vokal.html Դիտման ամսաթիվը՝ 30. 08. 2021 թ., ժամը՝ 14. 50:

ԼԻԼԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ЛИЛИ МАРКОСЯН
LILI MARKOSYAN

ՎՈԿԱԼԻԶՆԵՐՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ВОКАЛИЗЫ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ
VOCALISES IN THE STUDYING

Պատասխանատու և մասնագիտական խմբագիր՝ *ԳՈՀԱՐ ԿԱՌԼԵՆԻ ՇԱԳՈՅԱՆ*
Գիտական խմբագիր՝ *ԾՈՎԻՆԱՐ ՀՐԱՅՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ*
Գեղարվեստական խմբագիր և ձևավորող՝ *ԳՈՀԱՐ ՎԻԼԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

Չափսը՝ 60x84 1/8: Թուղթը՝ օֆսեթ,
3,5 տպագրական մամուլ
Տպաքանակ՝ 101 օրինակ:
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
«ԵՊԿ հրատարակչություն»
ՀՀ, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
Հեռ.՝ + 37410 523993+118, + 37455 002162
E-mail: YSCPublishingHouse@gmail.com

Տպագրվել է «Գևորգ և Հրայր» ՍՊԸ տպարանում: